«ԹԵՐԹ ԷՅ ԷՄ» ՍՊԸ
ՀՀ, Երևան, 0054, Չարենցի 1
+374 (60) 528 528 @ editor@tert.am

ԹԵՐԹ.am
tert.am

"Tert am" Ltd.
RA, Yerevan, 0054, Charents 1
+374 (60) 528 528 @ editor@tert.am

Վայոց Ձորի մարզպետ Տրդատ Սարգսյանին

Tert.am-ի լրագրող Նելլի Լազարյանից
nellilazaryan@gmail.com

077-37-38-31

Տեղեկություն ստանալու հարցում

Պարո՛ն Սարգսյան, համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություն:

Կառավարությունը երեկ որոշել է վարչապետի աշխատակազմին ամրացված 10 ավտոմեքենաները ամրացնել Արարատի, Սյունիքի, Վայոց ձորի մարզպետարաններին և Քաղաքաշինության, Տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին:

-Ասացեք խնդրեմ, Վայոց Ձորի մարզպետարանին քանի՞ ավտոմեքենա է ներկա պահին սպասարկում, ի՞նչ մակնիշի են և ըստ խնդրագրի քանիսը կավելանան և ի՞նչ մակնիշի: Դրանք փոխարինման համա՞ր են, թե հավելվում են եղած ծառայողական մեքենաներին:

-Ի՞նչ նպատակով եք Կառավարությունից խնդրել օպտիմալացված ծառայողական տրանսպորտային միջոցներից ձեզ հատկացնել մեքենաներ: Կնշե՞ք նոր մեքենան, կամ մեքենաներո առանձին պաշտոնյաների համա՞ր է նախատեսված, թե պետական մարմինների:

-Դեռ տարեսկզբին վարչապետի աշխատակազմում սկսել էր ծառայողական մեքենաների կրճատման գործընթաց և հայտարարվել էր, որ պետական կառավարման համակարգում ևս մեքենաների կրճատման գործընթացը կլինի: Արդյոք մարզպետարանում ևս այս ժամանակահատվածում հրաժարվել են ծառայողական մեքենաներից:

-Ընդհանուր առմամբ վառելիքի ամսական ծախսն ինչքա՞ն է կազմում:

Tert.am կայքի լրագրող Նելլի Լազարյան

Tert.am կայքի գլխավոր խմբագիր Սասուն Խաչատրյան

27.09.2019

Հ. Հ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
Մուտքի թիվ 5653
27 09 2019թ.